# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՓՈՒԼԵՐԸ (1920-1930-ական թթ.)

ԽԱՉԱՏՐՅԱՆ Կ. Հ.

*Ռուսաստանում խորհրդային իշխանության հաղթանակը որակապես նոր իրադրություն արձանագրեց երկրի պաշտպանական (ռազմական) արդյունաբերության ոլորտում: Պետք է նկատել, որ սպառազինությունն և ռազմամթերք արտադրելու բնագավառում ցարական Ռուսաստանը ակնհայտորեն հետ էր մնացել ինչպես արևմտաեվրոպական առաջատար երկրներից, այնպես էլ ԱՄՆ-ից: Երկրում թույլ էին զարգացած պաշտպանական արդյունաբերության ողնաշարը կազմող մեքենաշինությունը, մետաղագործական և քիմիական արդյունաբերությունը: Կայսրության մեքենաշինության արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը 1913 թ. կազմել է երկրի խոշոր արդյունաբերության ընդհանուր արտադրանքի ընդամենը 7%-ը, իսկ Ռուսաստանի մեքենաշինության տեսակարար կշիռը համաշխարհային մեքենաշինության մեջ չէր անցնում 3,5%-ից[1]:*

*Խորհրդայնացումից հետո հայտնվելով միջազգային քաղաքական և անտեսական մեկուսացման մեջ՝ Ռուսաստանի նոր իշխանությունները պարտադրված էին ներքին միջոցներով հոգալու երկրի պաշտպանական արդյունաբերության զարգացման մասին: Գործնականում դա հնարավոր էր միայն տեղական արդյունաբերության վերազինման և ռազմականացման, պաշտպանական արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման միջոցով: Խորհրդային իշխանություններն անմիջապես խիստ հսկողություն սահմանեցին ռազմական գործարանների նկատմամբ դրանց հզորությունների հնարավոր փոշիացումը կանխելու նպատակով: Խորհրդային իշխանության առաջին իսկ դեկրետով կազմավորված ՌՍԴԽՀ պաշտպանության խորհուրդը ոչ միայն արտակարգ հսկողություն էր իրականացնելու ռազմական կամ ռազմականացված գործարանների նկատմամբ, այլև անմիջապես դիմեց գործուն միջոցների՝ ռազմական արտադրանքը կատարելագործելու և գործարանների թողունակությունը բարձրացնելու ուղղությամբ[2]: Այդ հարցում Պաշտպանության խորհուրդը սերտ և արդյունավետ համագործակցում էր Համառուսաստանյան ժողտնտխորհի և նրա տեղական մարմինների հետ: Վերջիններս նշանակալի դեր էին կատարելու Խորհրդային Ռուսաստանի պաշտպանական արդյունաբերությունը կազմակերպելու և դրա վերելքն ապահովելու գործում: Խորհրդային նորա-*

---

[1] *Տե՛ս* **Розенфельд С. Я., Клименко Р. И.** *История машиностроения СССР, М., 1961, с. 96.*

[2] *Տե՛ս* **Коваленко Д. А.** *Оборонная промышленность Советской России в 1918-1920 гг., М., 1970, с. 193.*

ստեղծ պետության համար դա խիստ կարևոր էր, քանի որ հիմնականում դրանից էր կախված խորհրդային իշխանության լինել-չլինելու հարցը Ռուսաստանում քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ներխուժման շրջանում: Ուստի պատահական չէր, որ 1918-1920 թթ. խորհրդային երկրի ամբողջ արդյունաբերությունը գործնականում աշխատում էր երկրի պաշտպանունակությունը և Կարմիր բանակի ռազմական կարիքներն ապահովելու համար: Ռազմական արտադրանքի թողարկումը չեչտակիորեն ավելացավ հատկապես 1919-1920 թթ., երբ դրեթե սպառված էին նախկին պաշարները, իսկ մեծաթիվ բանակին մատակարարելու համար պահանջվում էին հսկայական քանակությամբ սպառազինություն, ռազմամթերք և հանդերձանք:

Արդեն 1920 թ. վերջին Խորհրդային Ռուսաստանում դրվեց ռազմական արդյունաբերության կենտրոնացված ղեկավարման հիմքը, որն ընդհանուր և բնորոշիչ էր այդ տարիների խորհրդային վարչակարգի համար: Վերջինիս կենտրոնում համակարգող մարմինն էր դեռևս 1919 թ. ստեղծված Ռազմական արդյունաբերության խորհուրդը (Ռազմարդխորհուրդ), որի ճյուղային գլխադասային մարմինները կառավարում էին պաշտպանական արդյունաբերության առանձին ճյուղերը:

ՌՍԴԽՀ Ժողկոմխորհի 1921 թ. մարտի 17-ի որոշմամբ՝ Ռազմարդխորհուրդը վերանթարկվում է Ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդին (ԺՏԲԽ) և իրականացնելու էր հետևյալ հիմնական գործառույթները՝ ռազմական արդյունաբերության արտադրական կենտրոնների կազմակերպում, արտադրական կարողությունների համակենտրոնացում և դրանց հետագա զարդացում, պաշտպանական գործարանների միասնական կառավարում և աշխատանքների վերահսկում: ՌՍԴԽՀ ԺՏԲԽ-ի նախագահության 1921 թ. հունիսի 6-ի որոշումով ԺՏԲԽ-ի կառուցվածքում ստեղծվում է Ռազմական արդյունաբերություն գլխավոր վարչություն (Գլխռազմարդ): Խորհրդային Միության կազմավորումից հետո ԽՍՀՄ Կենտգործկոմի 1923 թ. նոյեմբերի 12-ի որոշմամբ ՌՍԴԽՀ Գլխռազմարդը վերանվանվում է ԽՍՀՄ Գլխռազմարդ: Այն իրականացնելու էր հետևյալ հիմնական գործառույթները. ռազմական արդյունաբերության ընդգավառում միասնական քաղաքականության մշակում (որը բխելու էր խորհրդային պաշտպանության պետական-կուսակցական դոկտրինից), ռազմական արդյունաբերության բոլոր ճյուղերի միասնական կառավարում և արտադրանքի պլանավորում[3]:

Պետք է նշել, որ ԽՍՀՄ-ում անցումը ՆԷՊ-ից արդյունաբերականացման քաղաքականությանը սկզբնական շրջանում, առաջին

---

[3] Տե՛ս **Мухин М. Ю.** *Эволюция системы управления советской оборонной промышленностью в 1921-1941 годах и смена приоритетов "оборонки" (Отечественная история, М., 2000, N 3, с. 3-4).* Տե՛ս նաև **Симонов Н. С.** *Военно-промышленный комплекс СССР в 1920-1950-е годы. Темпы экономического роста, структура, организация производства и управление, М., 1996, с. 38.*

հերթին, արտահայտվում էր պաշտպանական արդյունաբերության կտրուկ զարգացմամբ էներգետիկայի աննախադեպ զարգացմանը զուգընթաց: Եվ պատճառը ոչ միայն այն էր, որ արագացված տեմպերով կառուցվում էին տարբեր ուղղությունների նոր ձեռնարկություններ, այլև այն, որ պաշտպանական արդյունաբերությունը համալրվում էր գործարաններով, որոնք վերապրոֆիլավորվում և քաղաքացիականից անցնում էին ռազմական արտադրության: Պատճառների թվում պետք է նշել նաև 1920-ական թթ. վերջերից ԽՍՀՄ-ում լայնորեն տարածված տեղական կամ հանրապետական գերատեսչական ենթակայության գործարանների պաշտպանական արդյունաբերության միութենական գերատեսչությունների կառավարման ոլորտն անցնելու գործելաոճը: Ավելացնենք, որ որպես խորհրդային ժողտնտեսության կարևորագույն ճյուղ պաշտպանական արդյունաբերությունը սերտորեն շաղկապված էր պետական-կուսակցական ղեկավարման համակարգի հետ, ուստի շատ հեշտությամբ կարող էր ընդգրկվել խորհրդային տնտեսության պլանային, վարչահրամայական համակարգում, դառնալ նրա «առաջամարտիկը»:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ խորհրդային տնտեսության համակարգում անցումը վարչահրամայական կառավարման եղանակի առաջինը տեղի էր ունենալու հենց պաշտպանական արդյունաբերության բնագավառում: Եվ դա տրամաբանական էր. ռազմական բարդ տեխնիկայի և սպառազինության արտադրությունը պահանջում էր տասնյակ գործարանների գործունեության խիստ կենտրոնացում և միասնական կառավարում պետական-կուսակցական աչալուրջ հսկողության պայմաններում, երբ յուրաքանչյուր բացթողում և «վնասարարություն» պատժվում էր ամենայն խստությամբ: Վարչահրամայական կառավարման համակարգն աստիճանաբար հաստատվեց նաև խորհրդային ամբողջ ժողտնտեսության մեջ:

1920-ական թթ. վերջին աշխարհում միջազգային իրադրության կտրուկ սրումը խորհրդային իշխանություններին ստիպեց առավել մտահոգվել երկրի պաշտպանական արդյունաբերության խնդիրներով: Դրանք հատուկ քննարկման առարկա դարձան ՀամԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1929 հուլիսի 1-ի և 8-ի փակ նիստերում: Քննարկումների ընթացքում, 1929 թ. հուլիսի 15-ին քաղբյուրոն ընդունում է «Ռազմական արդյունաբերության մասին» խիստ գաղտնի որոշումը[4]:

Խորհրդային պետության և կուսակցական բարձրագույն ղեկավար մարմինների աչալուրջ վերաբերմունքը ռազմական արդյունաբերության խնդիրներին, նրանց կողմից ձեռնարկված կտրուկ միջոցառումները շուտով տալու էին իրենց դրական արդյունքները: Այդ առումով, առաջին հնգամյակի վերջին տարիները 1931-1932 թթ., բեկումնային կարելի է համարել ԽՍՀՄ ռազմաարդյունաբերության ձևավորման և զարգացման գործում: Աննախադեպ ընդլայնվեցին

---

[4] Տե՛ս Политбюро ЦК РКП(б) — ВКП(б). Повестки дня заседаний, 1919-1952. Каталог, в трех томах, т. 1, 1919-1929, М., 2000, с. 708.

ռազմական ծրագրերը և պատվերները, երկիրն անցում էր կատարում ռազմական արտադրանքի բաղմաճյուղ մասնագիտացված համակարգի ստեղծմանը: Դա պայմանավորված էր Կարմիր բանակի արագ վերազինման հրամայականով: ԽՍՀՄ ժողկոմխորհին կից Պաշտպանության կոմիտեի կողմից (որի նախագահն էր Ի. Ստալինը) 1931-1932 թթ. ընդունված մի շարք հիմնարար որոշումներով ռազմական արտադրանքի գերակա ուղղություններ էին հռչակվում ռազմաավիացիոն արտադրությունը, տանկաշինությունը, ռազմական նավաշինությունը, հրետանային և հակաօդային պաշտպանության համակարգերի, հակաքիմիական պաշտպանության և քիմհարձակման միջոցների արտադրությունը:

Երկրի պաշտպանական արդյունաբերության առջև դրված բարդ և պատասխանատու խնդիրների լուծումը պահանջում էր նաև ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում: Պաշտպանական արդյունաբերության ղեկավարման վերը նշված համակարգը, ենթարկվելով վարչակառավարման որոշ փոփոխություններ, ամփոփվեց ԽՍՀՄ ԺՏԲԽ-ի շրջանակով մինչև 1932 թ. սկիզբը, երբ համակարգն արմատական վերափոփոխումների ենթարկվեց:

1932 թ. հունվարի 5-ին ԽՍՀՄ ԺՏԲԽ-ն բաժանվեց ծանր, թեթև և անտառային արդյունաբերության ժողկոմատների: Պաշտպանական արդյունաբերության կառավարումն այսուհետև կենտրոնանալու էր ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմատի համակարգում ձևավորված Գլխավոր ռազմամոբիլիզացիոն (Գլխռազմմոբ) վարչության մեջ: Այն փաստը, որ ծանր արդյունաբերության ժողկոմ նշանակվեց կուսակցական-պետական փորձառու գործիչ Գ. Օրջոնիկիձեն, որը մինչ այդ, 1920 թ. վերջերից, ԽՍՀՄ ԺՏԲԽ-ի նախագահն էր, վկայում է այն մասին, թե որքան էր կարևորվում ճյուղի գործունեությունը ԽՍՀՄ ղեկավարության կողմից: Ի դեպ, Օրջոնիկիձեն մնաց ժողկոմի պաշտոնում մինչև իր ողբերգական մահը 1937 թ. փետրվարի 18-ը:

Նշենք, որ եթե 1929 թ. դրությամբ խորհրդային պաշտպանական արդյունաբերությունը ներառում էր 52 ձեռնարկություն, ապա արդեն 1932-1933 թթ. Գլխռազմմոբ վարչության մեջ կենտրոնացված էին 127 ձեռնարկություն: Դրանք ներգրավված էին արտադրության հետևյալ հիմնական ճյուղերում՝ ավիացիոն, հրետանային-զինանոցային, զինագնդացրային, փամփուշտների, արկերի և արկերի պայթուցիչների, տանկերի և զրահամեքենաների արտադրություն, ռազմաքիմիական և այլն[5]: Ռազմապաշտպանական ձեռնարկությունների գերակշիռ մասը տեղակայված էր ՌՍԴԽՀ տարածքում (մեծ մասը՝ Մոսկվայում և շրջանում), մի քանի ձեռնարկություն (հիմնականում ռազմաավիացիոն արտադրության) գտնվում էին Խորհրդային Ուկրաինայում:

Պաշտպանական արդյունաբերության առջև պետության կողմից դրված հսկայածավալ առաջադրանքներն իրականացնելու համար 1932 թվականից կտրուկ ավելացվեցին ոլորտում ֆինանսական

---

[5] Տե՛ս Мухин М. Ю., նշվ. աշխ., էջ 6-7:

ներդրումների ծավալները: Երկրի ռազմական բյուջեն արձանագրեց մինչև 120% աննախադեպ աճ, ընդ որում՝ ներդրումների ծավալներն աճեցին հատկապես ավիացիոն և տանկաշինության ոլորտներում: Միասին վերցրած դրանք կազմում էին ռազմական արդյունաբերության մեջ բոլոր ներդրումների շուրջ մեկ երրորդը[6]:

Այսպիսով, ռազմական արտադրանքի բնագավառում առաջնությունը ԽՍՀՄ-ում տրվում էր ռազմաավիացիոն արտադրությանը: Հետաքրքիր է, որ արդեն 1930-ական թթ. խորհրդային ռազմական արդյունաբերության ձեռնարկությունների շուրջ մեկ երրորդը (127-ից 41-ը) կազմում էին ավիացիոն ձեռնարկությունները, ինչը վկայում է ճյուղի նկատմամբ խորհրդային իշխանությունների հատուկ ուշադրության մասին: Ավիացիոն արտադրության, այդ թվում ինքնաթիռաշինության, ոլորտում կտրուկ զարգացման դործընթացը ԽՍՀՄ-ում սկսվել էր դեռևս 1920-ական թվականների վերջից և հաջողությամբ շարունակվեց հետագա տասնամյակներում: Իրականացված միջոցառումների շնորհիվ ավիացիոն արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը, համեմատած ռազմական այլ արտադրանքի հետ, կտրուկ աճ արձանագրեց: Ուստի պատահական չէ, որ «առաջին հնգամյակի չորս տարում ավիացիոն արդյունաբերությունը թողարկեց 4.289 ինքնաթիռ՝ երկու անգամ ավելի, քան խորհրդային իշխանության անցած բոլոր տարիներին»: Իսկ արդեն 1936 և 1937 թթ. յուրաքանչյուր տարի ԽՍՀՄ-ում արտադրվում էր այնքան ինքնաթիռ, որքան առաջին հնգամյակի տարիներին[7]: Արդյունքներն, իրոք, տպավորիչ էին:

1930-ական թթ. սկիզբը բեկումնային էր նաև ԽՍՀՄ տանկաշինության և ռազմական նավաշինության ոլորտներում: Եթե ավիացիոն արդյունաբերության ճյուղը Ռուսաստանում գոյություն ուներ դեռևս դարասկզբից, իսկ նավաշինությունը՝ շատ ավելի վաղ ժամանակներից, ապա տանկաշինությունը լիովին նոր ճյուղ էր: ԽՍՀՄ-ը սեփական տանկեր սկսեց արտադրել միայն 1931 թվականից, այն էլ խիստ սահմանափակ քանակով: Երկրում ծավալված «Տանկային մեծ ծրագիրը» թեև իսկույն հայտնվեց խորհրդային ղեկավարության, այդ թվում՝ Ի. Ստալինի անմիջական ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, խիստ դանդաղ էր իրացվում: Պատճառներից հիմնականը ղրահանյութի և արդիական սարքավորումների, ինչպես նաև որակյալ կադրերի սահմանափակ լինելն էր: Տանկաշինության ոլորտում դժվարությունները ԽՍՀՄ-ում հաղթահարվեցին միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ երկիրը յուրացրեց տարբեր մակնիշների ծանր տանկերի արտադրությունը: Երկրորդ հնգամյակի տարիներին՝ 1933-1937 թթ., բուռն զարգացում ապրեց նաև ռազմական նավաշինությունը, հատկապես սուզանավաշինությունը: Այդ տարիներին

---

[6] Տե՛ս **Davies R. W.** *Crisis and Progress in the Soviet Economy. 1931-1933 (The Industrialisation of Soviet Russia), London, 1996, p. 169, 312.*

[7] Տե՛ս **Шумихин В. С.** *Советская военная авиация, 1917-1941, М., 1986, с. 155, 157.*

ԽՍՀՄ-ում արտադրված 345 ռազմական նավերից 137-ը սուզանավեր էին[8]:

Նշված ժամանակաշրջանում խորհրդային պաշտպանական արդյունաբերության զարգացման դերակա ուղղություններից էին նաև հրետանային զինատեսակների, հակաօդային պաշտպանության համակարգերի ստեղծումը, դրանց համար ռազմամթերքի արտադրության և ռազմաքիմիական արդյունաբերությունը: Եթե առաջին հնգամյակում ռազմական արդյունաբերության նշված ճյուղերում աշխատանքներն անբավարար էին և նախատեսված ծավալները հիմնականում թերակատարվում էին, ապա արդեն երկրորդ հնգամյակում դրվեցին զարգացման ամուր հիմքերը:

ԽՍՀՄ ռազմաքիմիական արդյունաբերության առաջատար ձեռնարկություններից էր դառնալու երկրի կառավարության 1933 թ. մայիսի 11-ի թիվ 931 որոշմամբ Խորհրդային Հայաստանում՝ Երևանի մերձակայքում, կառուցվելիք սինթետիկ կաուչուկի (ՍԿ) գործարանը: Որոշման ընդունման գործում մեծ էր ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմ Գ. Օրջոնիկիձեի դերը: Աշխատանքները ֆինանսավորվելու էին նրա ղեկավարած ժողկոմատի միջոցներից: Կառավարության որոշումը ստորագրել էր ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Վ. Մոլոտովը: Կարելի է արձանագրել, որ գործարանը «ՍԿ Սովպրենը» (հետագայում «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը) դառնալու էր Հայաստանում պաշտպանական արդյունաբերության ոլորտի առաջնեկը: Ի կատարումն ԽՍՀՄ կառավարության 193՝ թ. մայիսի 11-ի որոշման՝ ՀՍԽՀ Ժողկոմխորհը 1933 թ. հունիսի 7-ի և հունիսի 19-ի նիստերում լսում է գործարանը կառուցելու մասին կառավարության նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի զեկուցումը: Շինարարությունը ժամանակին ավարտելու և «ՍԿ Սովպրենի» գործարկումը հաջողությամբ իրականացնելու համար ընդունվեցին միջոցառումների համալիր ծրագրեր: Գործարանի կառուցման և շահագործման հանձնելու ողջ ընթացքը գտնվում էր ինչպես ՀԿ(բ)Կ կենտկոմի ե ՀՍԽՀ կառավարության, այնպես էլ ԽՍՀՄ ղեկավարության աչալուրջ հսկողության ներքո[9]:

Երկրում արհեստական կաուչուկի արտադրության կազմակերպումը սկզբունքային նշանակություն ուներ ԽՍՀՄ-ի համար: Ռազմական արտադրանքի համար իրոք կարևոր այդ հումքը վերջինս ստիպված էր թանկ գնով ներմուծել արտասահմանից: Ուստի Հայաստանում արհեստական կաուչուկի արտադրության կազմակերպումը միտված էր մոտ ապագայում վերացնելու արտասահմանից ԽՍՀՄ-ի կախվածությունը: Նշենք, որ քլորոպրենային կաուչուկի առաջին արտադրանքը «ՍԿ Սովպրեն» գործարանը թողարկեց 1940 թ. մարտից[10]:

---

[8] Տե՛ս Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие, под ред. Бакланова О. Д., Рогозина О. К. и др., М., 2005, с. 460.

[9] Տե՛ս Գևորգյան Ռ., Մեծ քիմիայի «առեղծվածը», Ե., 2010, էջ 41-44:

[10] Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.), Ե., 2010, էջ 460:

1935 թ. վերջերից ԽՍՀՄ «պաշտպանական» ոլորտի կառավարման վարչական համակարգում դարձյալ արմատական փոփոխություններ արձանագրվեցին: Դա պայմանավորված էր խորհրդային պետական և կուսակցական բարձրագույն ղեկավար շրջաններում տեղի ունեցող խմբակային պայքարով, ինչպես նաև երկրում ծավալվող քաղաքական բռնություններով: Մյուս կողմից 1930-ական թթ. երկրորդ կեսից վտանգավոր լարվածություն էր առաջացել միջազգային հարաբերություններում կապված ֆաշիզմի տարածման և գերմանական բլոկի երկրների զավթողական ծրագրերի աշխուժացման հետ: Հերթական «ռազմական տագնապի» պայմաններում խիստ հրատապ էր դառնում սպառազինության, ռազմամթերքի, բանակային կապի, քիմպաշտպանության և քիմհարձակման միջոցների, զինվորական հանդերձանքի արտադրանքի չափերի կտրուկ ավելացումը, մանավանդ որ Կարմիր բանակի անձնակազմի թվաքանակը գրեթե կրկնապատկվել էր: Երկրի զինված ուժերի քանակը 1933 թ. 885 հազարից 1937 թ. հասել էր 1,5 միլիոնի[11]:

Շուտով լուծարվում է ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմատի Գլխռազմմոբ վարչությունը, իսկ նրա ենթակայության տակ գտնվող պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունները խմբավորվում են երկու նորաստեղծ գերատեսչությունների՝ Ռազմական արդյունաբերության գլխավոր վարչության և Ռազմամթերքների գլխավոր վարչության շրջանակներում: Իսկ արդեն ԽՍՀՄ Կենտգործկոմի 1936 թ. դեկտեմբերի 8-ի որոշմամբ երկրի ռազմական ողջ արդյունաբերությունը կենտրոնացվում է ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության առանձին ժողկոմատի համակարգում: Սա, մեր կարծիքով, շրջադարձային քայլ էր ԽՍՀՄ տնտեսության «պաշտպանական» համակարգի հետագա զարգացման համար: Պաշտպանական (ռազմական) արդյունաբերությունն աստիճանաբար և հաստատուն կերպով ստանձնում էր Խորհրդային Միության ժողտնտեսության անվիճելի «լոկոմոտիվի» դերը:

Սակայն ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում խորհրդային երկրում, այդ թվում «պաշտպանական» ոլորտում: Այս առումով հատկանշական է Ի. Ստալինի կողմից դեռևս 1936 թ. ապրիլի 8-ին ոլորտի պատասխանատու Գ. Օրջոնիկիձեին տրված հանձնարարականը. «Ռազմական արդյունաբերությունում դործը դեռ դժվարությամբ է առաջ դնում: Հարկավոր է գազանի համառությամբ զարկ տալ ավիացիայի, հրետանու (զարգացմանը – Խ. Կ), արտադրանքի որակին (որակի՞ն)»[12]:

Բացի այն, որ խորհրդային ողջ տնտեսությունը 1936-1937 թթ. հայտնվել էր ճգնաժամային իրավիճակում (չէին կատարվում պետական պատվերներն անդամ դերակա նշանակություն ունեցող պաշտպանական արդյունաբերության ոլորտում, մեծ չափերի էին հասնում վնասարարությունը, արտադրանքի խոտանը և այլն),

---

[11] Տե՛ս Симонов Н. С., նշվ. աշխ., էջ 91:

[12] Տե՛ս Быстрова И. В. *Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы)*, М., 2006, с. 138.

1937 թ. երկրում ծավալված քաղաքական բռնաճնշումների դոհ դարձան ասնյակ հազարավոր որակյալ մասնագետներ և կադրեր: Բացառություն էր կազմում թերևս ավիացիոն արդյունաբերության ոլորտը, որտեղ, ինչպես վերը նշվեց, 1936-1937 թթ. արձանագրվեցին լուրջ հաջողություններ:

ԽՍՀՄ տնտեսությունում ստեղծված ծանր դրությունը, ինչպես նաև միջազգային ասպարեզում լարվածության կտրուկ աճը, խորհրդային ղեկավարությանը ստիպում էր դիմել առավել կտրուկ միջոցների «պաշտպանական» ոլորտում կուսակցական-պետական մարմինների վերահսկողությունն ուժեղացնելու համար: Այդ նպատակով ԽՍՀՄ Ժողկոմխորհի պաշտպանության կոմիտեին կից 1938 թ. կազմավորվում է ռազմաարդյունաբերական հանձնաժողով, որի վարույթում էին կենտրոնանալու այն գործառույթները, որոնք բխում էին երկրի տնտեսությունը և արդյունաբերությունը հնարավոր պատերազմին նախապատրաստելու հրամայականից: Հանձնաժողովի գլխավոր խնդիրն էր մոբիլիզացնել պաշտպանական արդյունաբերության բոլոր ռեսուրսները սպառազինության արտադրման և Կարմիր բանակի ու ռազմածովային ուժերի մատակարարման առաջադրանքների (որոնք նախանշում էր Պաշտպանության կոմիտեն) կատարումն ապահովելու համար: Ռազմաարդյունաբերական հանձնաժողովը ոլորտում իրականացնելու էր նաև վերահսկողական և աշխատանքների կազմակերպման գործառույթներ՝ «բաշխելու էր մոբիլիզացիոն պլանի[13] առաջադրանքները Միության և միութենական հանրապետությունների ժողկոմատների միջև...»[14]: Կոմիտեի գործունեությունն ընթանում էր գաղտնիության խիստ ռեժիմի պայմաններում: Պետք է նշել, որ գաղտնիության ռեժիմը պաշտպանական համակարգի ձեռնարկություններում խստացվել էր դեռևս 1930-ական թթ. սկզբի «ռազմական տագնապի» տարիներին:

Պաշտպանական արդյունաբերության միասնական ժողկոմատը գոյատևեց մինչև 1939 թ. սկիզբը, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հունվարի 11-ի որոշումով այն բաժանվեց Ավիացիոն արդյունաբերության, Նավաշինության արդյունաբերության, Ռազմամթերքների և Սպառազինության առանձին ժողկոմատների: Դրանց կառուցվածքը հաստատվեց ԽՍՀՄ Ժողկոմխորհի «Պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի տրոհման մասին» 1939 թ. հունվարի 21-ի որոշումով: Համաձայն դրա յուրաքանչյուր ժողկոմատի կազմում ձևավորվեցին մի քանի գլխավոր վարչություններ, որոնք ղեկավարելու էին ռազմական առանձին արտադրությունները՝ հրետանային, սարքաշինության, փամփուշտների, ավիառումբերի և արկերի, ականների և նռնակների, պայթուցիչների, պարկուճների և այլն: Ինչ վերաբերում է տանկաշինությանը և

---

[13] Մոբիլիզացիոն պլան (ծրագիր, հայտ)՝ ռազմական արտադրանքի և պատվերների հատուկ պլան, որը կազմվում էր հնարավոր պատերազմին պատրաստ լինելու նպատակով: Մոբիլիզացիոն պլանով նախատեսված առաջադրանքների կատարումը հիմնականում դրվում էր պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների վրա:

[14] Տե՛ս Быстрова И. В., նշվ. աշխ., էջ 147, Симонов Н. С., նշվ. աշխ., էջ 41:

ռազմաքիմիական արտադրությանը, ապա պաշտպանական արդյունաբերության այդ ոլորտների գործարաններն անցան նույն թվականին ստեղծված ԽՍՀՄ միջին մեքենաշինության և քիմիական արդյունաբերության ժողկոմատների տնօրինությանը: Ընդ որում պաշտպանական ոլորտի գործարանները միավորվեցին Միջին մեքենաշինության ժողկոմատի համակարգում ստեղծված հատուկ «գլավկում» Գլավսպեցմաշում[15]:

Հանրագումարի բերելով պաշտպանական (ռազմական) արդյունաբերության, դրա կառավարման համակարգի ձևավորման և զարգացման գործընթացը ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ. կարելի է նշել, որ այդ տարիների միջազգային համեմատաբար խաղաղ պայմաններում ԽՍՀՄ-ը վճռական քայլեր ձեռնարկեց պաշտպանական արդյունաբերության զարգացման, դրա կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ: Արդեն 1930-ական թթ. վերջին ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերությունը կլանում էր երկրի տարեկան համախառն եկամտի մոտ 30%-ը: Նշենք, որ 1920-ական թթ. վերջին և 1930-ական թթ. սկզբին այդ ցուցանիշը կազմում էր ընդամենը 9-10%[16]: Ընդհանուր առմամբ եթե 1938-1940 թթ. ԽՍՀՄ ողջ արդյունաբերության արտադրանքի ծավալն աճեց 45%-ով, ապա ռազմական արդյունաբերության արտադրանքի ծավալն ավելացավ 2,8 անգամ[17]:

Այսպիսով, խորհրդային իշխանության ընդամենը երկու տասնամյակների ընթացքում պաշտպանական արդյունաբերությունը վերածվեց ԽՍՀՄ տնտեսության արդյունաբերական խոշորագույն ճյուղի, սպառազինություն ներմուծող երկրից ԽՍՀՄ-ը դարձավ սպառազինության մատակարար Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրների համար (Չեխոսլովակիա, Լեհաստան, Ֆինլանդիա, Իսպանիա, Չինաստան, Թուրքիա և այլն): Մատակարարումները դադարեցվեցին միայն Երկրորդ աշխարհամարտի սկզբին, երբ առավել հրատապ էր սեփական կուտակումներն ավելացնելու խնդիրը:

Կարելի է փաստել, որ Երկրորդ աշխարհամարտի սկզբին և Հայրենական պատերազմի նախաշեմին ԽՍՀՄ-ը հիմնականում լուծել էր երկրի ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման կարևոր հիմնախնդիրը:

## ОСНОВНЫЕ ЭТАПЫ РАЗВИТИЯ СОВЕТСКОЙ ОБОРОННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ И СИСТЕМЫ ЕЕ УПРАВЛЕНИЯ (1920-1930-ые гг.)

ХАЧАТРЯН К. Г.

**Резюме**

С приходом к власти большевики стали уделять особое внимание вопросам обороноспособности страны и развития оборон-

---

[15] Տե՛ս Мухин М. Ю., նշվ. աշխ., էջ 11-13:

[16] Տե՛ս Тыл советских вооруженных сил в Великой Отечественной войне, М., 1977, с. 13.

[17] Տե՛ս История социалистической экономики СССР, т. 5, М., 1978, с. 55.

ной промышленности. Уже к концу 1920 г. в Советской России были заложены основы централизованной системы управления военной промышленностью, что стало залогом ускоренного развития отрасли.

Система управления советской оборонной промышленностью с 1921 по 1932 гг. сосредотачивалась в рамках ВСНХ, с 1932 по 1936 гг. — Наркомата тяжелой промышленности СССР, с 1936 по 1939 гг. — Наркомата оборонной промышленности. В 1939 г., после расформирования последнего, были образованы отраслевые наркоматы оборонной промышленности: боеприпасов, вооружений, авиационной и судостроительной промышленности, среднего машиностроения.

За короткий период из страны, ввозящей вооружение, СССР превратилась в страну, ее экспортирующую. Таким образом, к началу Великой Отечественной войны была решена задача создания советского военно-промышленного комплекса.